ՆԻԿՈԼԱՅ ԱՍԵՎ

ԹԱՐԳՄ. ՅԵ.Զ.



ՉԻԾԵՐՎԱ ԱՂԸ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

32-Л
147
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
891.71 Մ
Ա-73

89 15.02.2013
Ա-73
2580

ՆԿ. Ա. ՍԱՄՈՒՎԱԼՈՎԻ

30 MAY 2011



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1

Գազանանոցում բոլորից բարձրը
ու հաստն է փիղը,
հազիվ է խցկվել
տանիքի տակին։
Հնդկական փիղը,
սքանչելի փիղը,
կնճիթն ահագին։

2

Այդ հսկա բույով իր,
այդ չքնաղ մաշկով
կարող եր գրավել
նա մի մեծ պաշտոն։
Բայց քանի վոր հիմար է—
անհոգ ու անվիշտ
կնճիթով խաղում է
իր պոչի հետ միշտ։

3

Յերբ իջնում է գիշերը
հանդարտ, անաղմուկ —
կամացուկ շարժվում է
խավարում մի մուկ։
Նա արդեն սպասում է,
վոր որը մթնի,
վոր յելնի բնից իր
մի փշրանք գտնի։

4

Յեվ ահա — արթնանում է
փիղը սարսափած.
աչքերից փախչում է
թմրությունն հանկարծ։
Իր հսկա վոտները
դոփելով հողում —
սարսափից մռնչում է
ու ահից դողում։

5

Կածում է իր սիրտը
մի վախ անսելի.
խավար է իր շուրջը
մթին ահով լի

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
59101·66



Կովել կարելի՞ յե
այդ խավար ժամին...
Յերևի ահեղ է
անտես թշնամին։

6

Մռնչից արթնանում է
առյուծը դեղին.
քնաթաթախ զայրանում է
ու թռչում տեղից։
Ահռելի մի վոռնոց է
թնդում յերախից —
ու դողում է մեր փիղը
անսահման վախից...

7

Աղմուկը անցնում է
վանդակից-վանդակ։
Յեվ ահա—արթնանում է
արջը սպիտակ։
Յեվ ահա—վոռնում է
խավարում նա ել,
կարծես թեժ կրակ է
բերանում պահել։

8

Լցվում է ողը
աղմուկով, կոծով.
աղմկում է պինգվինը
փոքրիկ կտուցով։
Վոզոզել է ջուրը
կոկորդիլոսին.
Նա վոչինչ չգիտե ղեռ
աղմուկի մասին։

9

Այնինչ Ջրաշունը,
վոր գազան է ծուլ,
մոռացած ծուլությունը
հառաչում է թուլ։
Ցեվ գորշ կապիկները
նստած իրար մոտ —
վժժում են, վժժում են
մինչև առավոտ։

10

Իսկ փոքրիկ մկնիկը
իր բունը մտած
լվանում է բեխերը
թաթերով իր թաց։
Մկներին պատմում է
մինչև առավոտ,
թե այդ գազանները
վորքան են վախկոտ։

11

Թեկուզ մի հսկա յե
փիղը մեզ համար—
բայց տեսեք՝ ինչքա՜ն ե
վախկոտ ու հիմար։
Ամենից նա հաստ ե,
ուժեղ ամենքից,
բայց նայեք՝ վախենում ե
մի փոքրիկ մկնից...

12

Ծիծաղելի յե
թե մկին, թե մեզ,
փիղը, վոր դողում ե
գիշերներն այդպես։
Դուք՝ հիմար վախկոտին այդ
ծաղրեք, յերեխեք,—
ե հանգիստ ու քաղցր,
ամուր կքնեք։

ZUUA-Arm CCP
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍ... ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0392202

ԳԻՆԸ 50 կ.

2580

Н. АСЕЕВ

НОЧНЫЕ СТРАХИ

ՊԵՏՀՐԱՏ № 1673. ԳՐԱՌԵՊ. № 6445 (Բ) ՏԻՐԱԺ 4000.
ՎԻՄ. ՊԵՏՀՐԱՏԻ - ՊԱՏՎԵՐ № 2954.